ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՇԵՆԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

«31» հուլիսի 2020թ.

ՀՀ Լոռու
մարզպետարան
մարզպետ Ա.Ղուկասյանին

N222

Հարգելի պարոն մարզպետ

Կից ներկայացնում ենք Ձեզ Շենավան համայնքի ավագանու թիվ 37-Ա և 38-Ա որոշումները:

Առդիր՝ 3/երեք/ թերթ:

Համայնքի ղեկավար՝ Մ.Մխիթարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի

Շենավանի համայնքապետարան, գ.Շենավան

հեռ. 077-57-07-57

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N37-Ա

2020 թվական 31 հուլիսի

ՇԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 31 -Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ Շենավան համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1. Հաստատել Շենավան համայնքի ավագանու 2020 թվականի հուլիսի 31-ի արտահերթ նիստի օրակարգը.
ՕՐԱԿԱՐԳ

1.Շենավան համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերից աճուրդ-վաճառքով օտարելու և գյուղատնտեսական նշանակության հողամասը վարձակալության իրավունքով տրամադրելու մասին:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Մովսիսյան Գագիկ			
Կարապետյան Ստյոպա			
Միրզոյան Հրայր			
Կարապետյան Պարույր			

Համայնքի ղեկավար Մ.Մխիթարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի

Շենավանի համայնքապետարան, գ.Շենավան

հեռ. 077-57-07-57

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 38-Ա

2020 թվական 31 հուլիսի

ՇԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԱՃՈՒՐԴ -ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18 - րդ հոդվածի 1 - ին մասի 21 - րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67 - րդ հոդվածով, 76 - րդ հոդվածի 1 - ին, 2 - րդ, 3 - րդ մասերով և 4 - րդ մասի 1 - ին կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ - ի ապրիլի 12 - ի թիվ 286-Ն որոշմամբ հաստատված կարգով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի ներկայացրած առաջարկությունը Շենավան համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը Շենավան համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերից ներքոհիշյալ հողամասերի աճուրդ վաճառքով օտարելուն

1) լոտ 1 ծածկագիր 06-086-0108-0013 0.3222 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսք /վկ.15072020-06-0038/ մեկնարկային գինը սահմանել 680.000 /վեց հարյուր ութսուն հազար/ ՀՀ դրամ,

2) լոտ 2 ծածկագիր 06-086-0107-0116 0.03 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայր հողատեսք /վկ 28072020-06-0051/ մեկնարկային գինը սահմանել 90000 (իննսուն հազար) ՀՀ դրամ,

2. Տալ համաձայնություն համայնքի վարչական տարածքում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող ներքոհիշյալ հողամասը մրցույթային կարգով 10 տարի ժամկետով վարձակալության իրավունքով տրամադրելու

1) լոտ 1 ծածկագիր 06-086-0120-0002, 0.3142 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսք /վկ.28072020-06-0042/ վարձակալության մեկնարկային գինը սահմանել 25000 /քսանհինգ հազար / ՀՀ դրամ,

3. Համայնքի ղեկավարին աճուրդ-վաճառքի և վարձակալության մրցույթի անցկացումից մեկ ամիս առաջ մամուլով և զանգվածային լրատվության այլ միջոցներով հրապարակել սակարկությունների անցկացման տեղը, օրը, ժամը, հողամասի գտնվելու վայրը, ծածկագիրը, մեկնարկային գինը, օգտագործման նպատակը, չափերը, ճանապարհների, ջրատարի, կոյուղու, էլեկտրահաղորդման գծերի, գազատարի առկայության մասին տվյալները (գյուղատնտեսական հողամասերի դեպքում՝ նաև որակական հատկանիշները), ինչպես նաև տվյալ հողամասի նկատմամբ սահմանափակումները (ներառյալ՝ սերվիտուտները):

4. Սահմանել՝ աճուրդի և մրցույթի մասնակցության վճար 5000 (հինգ հազար) ՀՀ դրամ, աճուրդային և վարձակալության մրցույթի մեկ քայլի չափը՝ լոտի մեկնարկային գնի 5%-ի չափով, նախավճարի չափը սահմանել՝ լոտի մեկնարկային գնի 5%-ի չափով:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Մովսիսյան Գագիկ			
Կարապետյան Ստյոպա			
Միրզոյան Հրայր			
Կարապետյան Պարույր			

Համայնքի ղեկավար Ս.Մխիթարյան